63. ԹԱ ՀՈ̈ՒՐ ՀԱՐԿԱՎԸԵՐ ԵԿԱՎ ՄԵԽԸ

Մին թաքավըեր ո̈ւրան մեխ կոռրող ուստեն ծեն ա տամ կոշտը, թա քեզ մին քշեր ժամանակ ըմ տամ, պիտի հարո̈ւր մեխ կոռրես, էքյուծ քշերավ կյիլյակյան ըմ տաննեմ, վըեր պադրաստ չինի, կլո̈խըտ կտրըլական ըմ։ Էտ մարթը մտածում ա, ասում, վըեր ես տընղավըս մին կրակ էլ տըեռնամ, մինչև լո̈ւսը իծծուն մեխ էլ չըմ կարել կոռրեմ, հինչ ա՞նեմ։ Մտածում ա, մտածում, քյինամ կնգանը կոշտը, ամմեն հինչ նաղլ անում։ Կնեգյն ասում ա.—Ամմեննին վախես վուչ, քյինա ըսկսե, վըերքան կըհըսցնես, կըկըտրես։ Մարթը մնամ ա չա̈չմիշ իլած, գյո̈ւդո̈ւմ չի, թա հի՞նչ անե։ Կնեգյը նորից ա ռիսկ տամ, թա ըրխըլյին քյինա̈, վախես վուչ։

Մարթը մխըրն սըրտըպընդվում ա, հըղն ինում, քյինամ ո̈ւրա̈ն գուրծատըեղը, ըսկըմում մեխ կոռրելը։ Կլո̈խը քաշ քցա̈ծ պեն ար անում, քշերեն կեսը խիլլա անց ա կենում, գյո̈ւդո̈ւմ չի, թա կոռրած մեխեն հաշկը հիշքան ա։ Լիհա լո̈ւսը մոտե թաքավըերեն պըլատան մարթիքյ ըն կյամ, թա ճեղ ըրա ղոթուն հետե մին քանի մըսմառ հացըռ, թաքավըերը մըեռալ ա։ Տա մնամ ա պըըշած։ Հավատը կյամ չի։ Վերջը, տա վըեր մխըրն ո̈ւրան հվաքում ա, կլո̈խը պիցրցնում ա բիդի երգյինքը եշում, թա փառք քեզ, մեխը մըսմառ չինող աստված…